



**YEREVAN STATE UNIVERSITY
ENGLISH PHILOLOGY CHAIR**

ARMENIAN ASSOCIATION FOR THE STUDY OF ENGLISH

**LANGUAGE AND LITERATURE IN
THE CONTEMPORARY PARADIGM
OF SCIENTIFIC KNOWLEDGE**

SCIENTIFIC JOURNAL

9

Yerevan
“Lusakn”
2018

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՆԳԼԻԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԼԵԶՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԳԻՏԱԿԱՆ ԻՄԱՑՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

9

Երևան
«Լուսակն»
2018

Հանդեսը հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ
The Journal is published by the decision of YSU Scientific Council

Գլխավոր խմբագիր՝ Ս. Գասպարյան, բ.գ.դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ քրթակից անդամ,
ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

Խմբագրական խորհուրդ՝

Ս. Տեր-Մինասովա, բ.գ.դ., պրոֆ.

Ա. Զորջի, բ.գ.դ., պրոֆ.

Ս. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Լ. Մաթևոսյան, բ.գ.դ., պրոֆ.

Ն. Հարությունյան, բ.գ.դ., պրոֆ.

Շ. Պարոնյան, բ.գ.դ., պրոֆ.

Գ. Մուրադյան, բ.գ.դ., դոց.

Գ. Հարությունյան, բ.գ.թ., դոց.

Լ. Կարապետյան, դոց. (պատասխ. քարտուղար)

Գ. Մադոյան, բ.գ.թ.

Editor-in –chief: S. Gasparyan, Doctor of Sciences (Philology), Prof., Corresponding
Member of RA NAS, Honoured Scientist of RA

Editorial Board:

S. Ter-Minasova, Doctor of Sciences (Philology), Prof.

A. Giorgi, Doctor of Philology, Prof.

S. Haroutyunian, Doctor of Philology, Prof.

L. Matevosyan, Doctor of Sciences (Philology), Prof.

Sh. Paronyan, Doctor of Sciences (Philology), Prof.

N. Haroutyunyan, Doctor of Sciences (Philology), Prof.

G. Muradyan, Doctor of Sciences (Philology), Associate Prof.

G. Haroutyunyan, Doctor of Philology, Associate Prof..

L. Karapetyan, Associate Prof. (executive Secretary)

G. Madoyan, Doctor of Philology

Լեզուն եվ գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում:
Գիտ. հանդես. – Եր.: Լուսակն, 2018. - 212 էջ. *Հանդեսը ընդգրկում է բանասիրա-
կան գիտելիքի հինգ հիմնական բնագավառ՝ լեզվաբանություն, լեզու. ու մշակույթ,
թարգմանաբանություն, գրականագիտություն, նաև դասավանդման մեթոդիկա:*

Language and Literature in the Contemporary Paradigm of Scientific Knowledge.
Scientific Journal. – Yerevan: Lusakn, 2018. - 212 p. *The Journal covers five basic
spheres of philological knowledge: Linguistics, Language and Culture, Translation
Studies, Literature Studies, as well as Language Methodology.*

© Ս. Գասպարյան, 2018 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	8
<i>Նաիրա Մկրյան</i>	
ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՐԱՑՈՒՅՑՈՒՄ	15
<i>Աննա Կնյազյան</i>	
ԳԻՏԱՖԱՆԱՍՏԻԿԱՅԻ ՍԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	25
<i>Գայանե Մուրադյան</i>	
ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՄԿՋԲԱՂԱՔՈՒՐ.....	32
<i>Ալինա Պետրոսյան</i>	
ԼՍՏԻՆԵՐԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՄԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԼԵԶՎՈՒՄ	40
<i>Արմենուհի Մարտիրոսյան, Մարինե Մկրտչյան</i>	
ԳՈՎԱԶԴԻ՝ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԷԹՆՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	47
<i>Ռուզաննա Առաքելյան, Գոհար Հարությունյան</i>	
ԵԶՐՈՒՅԹԻ ԵՎ ԲԱՌԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄՆ ՈՒ ԴԻԱՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	54
<i>Հասմիկ Ղաջոյան</i>	
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ՀԻՆԳ ՀՈՒՈՎԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՅԵՐԵՆԻ ՀՈՒՈՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՃՇԳՐԻՑ ԼԵՐԿԱՅԱՑՆՈՂ ԵՂԱՆԱԿ	63
<i>Աստղիկ Մխիթարյան</i>	
ԽՈՍՔԱՅԻՆ ԼԵՐԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԱՌՑԱՆՑ ԳՈՎԱԶՂԱՅԻՆ ՄԵԴԻԱՏԵՔՍՏԵՐՈՒՄ.....	69
<i>Համլետ Առաքելյան</i>	
ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԻՏԱԼԵՐԵՆՈՒՄ, ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ	76
<i>Մարիամ Գևորգյան</i>	
ԳՈՑԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐՈՎ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	88
<i>Միրարփի Կարապետյան</i>	
ԴԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	97
<i>Նարե Զորանյան</i>	

ՖԵՆՈՐՁԻ ՈՃԱԺԱՆՐԱՅԻՆ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԹՈՒՔԻՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	103
<i>Անի Տեր-Պետրոսյան</i>	

THE FUNCTIONAL INTERPRETATION OF OK? IN ACADEMIC DISCOURSE	111
<i>Nare Hakobyan</i>	

ЯЗЫКОВАЯ САМОИДЕНТИФИКАЦИЯ ГОВОРЯЩЕГО	123
<i>Марика Тонян</i>	

ԼԵԶՈՒ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՇՈՏԼԱՆԴԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐԶ	132
<i>Մարիանա Սարգսյան</i>	

ՄՇԱԿՈՒԹՅԱՆ ՈՐՊԵՍ ԼԵԶՈՒ	146
<i>Հասմիկ Մկրտչյան</i>	

COMPARATIVE ANALYSIS OF THE PROVERBS WITH THE CONCEPT WOMAN IN ENGLISH AND ARMENIAN	153
<i>Jemma Militonyan</i>	

ԹԱՐԳՄԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԱՎՈՐ Ե ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ	164
<i>Նարե Զաբաղյան</i>	

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՂԱՎՈՐ-ԱՆՄԵՂ ԵՐԿԱՏՈՒՄԸ Զ. ԶՈՅՄԻ «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՐՎԵՍՍԱԳԵՏԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ» ՎԵՊՈՒՄ	172
<i>Արեգա Համբարձումյան</i>	

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ МАЛОЙ ПРОЗЫ Р.Л. СТИВЕНСОНА	179
<i>Наталья Гончар-Ханджян, Анаит Акопян</i>	

ТЕМА СМЕРТНОЙ КАЗНИ В РОМАНЕ Т.КАПОТЕ ХЛАДНОКРОВНОЕ УБИЙСТВО	188
<i>Наре Мкртчян</i>	

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՈՍԱԶՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԵԴԻԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ	200
<i>Մարիամ Առաքելյան</i>	

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

Ալինա Պետրոսյան

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան

Բժշկագիտության բնագավառում մեծապես կարևորվում է լեզվական այնպիսի արտահայտչամիջոցների կիրառությունը, որոնք ուղղված են մասնագիտական, ախտորոշիչ և կլինիկական բնույթի տեղեկատվությունն առավել դյուրըմբռնելի դարձնելուն: Փոխաբերությունը կարելի է դասել այդպիսի լեզվամիավորների շարքին, որը ձևավորվում է արտալեզվական իրողության բնության տարրերի և տարաբնույթ բաղադրիչների մասին ընկալումների արդյունքում: Ըստ այդմ, սույն հոդվածում փորձ է արվում առանձնացնել կլինիկական այն նշանները և ախտաբանությունները, որոնք առկայացված են բնության բաղադրիչների անվանումներով լրացված փոխաբերություններով:

Բանալի բառեր. *ներքին հիվանդությունների բնագավառ, բնություն, արտաքին և ներքին հատկանիշներ, փոխաբերություն, աղբյուր-տիրույթ, ախտաբանություն, հիվանդություն, ախտորոշում:*

Ներածություն

Բժշկությունը, ի թիվս բազմատարր գործունեության, ենթադրում է բժիշկ-հիվանդ փոխհարաբերություն, մասնագիտական տեղեկատվության և գիտական բացահայտումների մասին տվյալների հաղորդում և տարածում հասարակության լայն շրջաններում, ինչպես նաև բժշկագիտական, կլինիկական, ախտորոշիչ և գիտահետազոտական գործունեության ծավալում: Նշվածն իրագործելու նպատակով անհրաժեշտ է լավագույնս տիրապետել բժշկագիտական խոսքի հմտություններին, ինչի հիմքում ընկած է մասնագիտական տերմինների լիարժեք յուրացումն ու անսխալ կիրառությունը:

Նշենք, որ բժշկագիտության անզլալեզու տերմինահամակարգը, որի ձևավորումը հարյուրամյակների պատմություն ունի, առ այսօր շարունակում է ակտիվորեն զարգանալ և ընդգրկել այնպիսի միավորներ, որոնք չեն կազմավորվում դասական լեզուների լատիներենի և հունարենի հիմքով: Այս առումով լեզվաբանների կողմից առանձնացվում են տերմինաստեղծ տարբեր աղբյուրներ (տե՛ս Ադայան 1971; Ղազանյան 1977; Лейчик 1973; Мотченко 2001; Brunt 1998; Sager 1996; Segen 1992) և ելնելով սույն հոդվածի շրջանակից՝ նպատակահարմար ենք գտնում սահմանափակվել տերմինաստեղծ այն աղբյուրների ընդհանուր դիտարկմամբ, որոնք հատուկ են բժշկագիտական անզլալեզու տերմինահամակարգին:

Մասնավորապես, բժշկագիտությանն առնչվող տարատեսակ գրականության քննությունից պարզել ենք, որ հունալատինական հիմքով լեզվանյութից զատ՝ բժշկագիտության ոլորտի տերմինները ներկայումս ստեղծվում են բառակազմական տարբեր եղանակներով, ինչպես օրինակ՝ սկզբնատառային կրճատման հենքով, որի արդյունքում ձևավորվում են հապավական միավորներ, օրինակ՝ *AFORMED* (alternating failure of response, mechanical, to electric depolarization), *BMD* (bone mineral density), *FISH* (fluorescent in situ hybridization), *HGSIL* (high-grade squamous intraepithelial lesion), *NAME* (nevi, atrial myxoma, myxoid neurofibromas, and ephelides), *PEEP* (positive end expiratory pressure), *SAD* (seasonal affective disorder), *TEDD* (total end-diastolic diameter), *VZIG* (varicella-zoster immune globulin), *ZEEP* (zero end-expiratory pressure) և այլն (Stedmans Online Medical Dictionary):

Բժշկագիտական տերմինահամակարգի կայուն միավորներից են նաև անվանային կազմով կաղապարները՝ տերմին-էպոնիմների և տերմին-տոպոնիմների տեսքով, որոնց բաղադրիչային կազմում կա հատուկ գոյականով լրացում (Мотченко 2004): Այս միավորները կլինիկական ախտանշանի, հիվանդության համախտանիշի, հիվանդության ախտորոշման, բուժման կամ հետազոտության մեթոդի անվանումներ են, որոնք ածանցվում են բժշկության ոլորտում հայտնի գիտնականների, բժիշկների և կլինիցիստների անուններից և աշխարհագրական տեղանուններից (Ferguson, Thomas 2014; Budrys 2005), ինչպես օրինակ՝ *Addison's Disease*, *Alzheimer's Disease*, *Bartter's Syndrome*, *Jacksonian Seizures*, *Krukenberg Tumor*, *Potter's Complex*, *Schilling's test*, *Vincent's Infection*, *Stockholm syndrome* և այլն (Harvard Health Publishing, Harvard Medical School):

Հարկ է նշել, սակայն, որ բժշկագիտական անգլալեզու տերմինահամակարգը համալրվում է նաև տերմիններով, որոնց հիմքում ընդհանուր գործածական միավորների բառիմաստների փոփոխությունն է: Տվյալ դեպքում բառիմաստի այսպիսի փոփոխություն առաջանում է փոխաբերացման արդյունքում, ինչի հիմքում ընկած է միավորների բառիմաստի արտաքին կամ գործառությանի համանմանությունը կամ զուգորդությունը: Ընդամին, մասնագիտական բառամբերքի իմացությունն ապահովելու ճանապարհին անհրաժեշտ է վերլուծել, կամ առնվազն, ընդհանրացված կերպով անդրադառնալ բժշկագիտության ոլորտում նոր տերմինների և միավորների քննությանը, մասնավորապես՝ լայն գործածություն ստացած փոխաբերությունների ուսումնասիրությանը:

Փոխաբերությունների կիրառությունը գիտության ոլորտում

Լեզուն կենդանի մեխանիզմ է, որի հարափոփոխ զարգացումների արդյունքում վերափոխվում են նաև լեզվական արտահայտչամիջոցների վերաբերյալ պատկերացումները: Այս հիմնավորմամբ՝ վերջին մի քանի տասնամյակում սկսել է կարևորվել փոխաբերությունը՝ աշխարհընկալման և լեզվագիտակցության ձևավորման տեսանկյունից դիտարկվելով որպես մարդու մտավոր գործունեության, աշխարհի կարգայնացման, գնահատման և մեկնաբանման միջոց (Будаев 2007:16-32):

Լեզվաբանական տեսությունների շրջանակում նկատելի է նաև փոփոխություն այն առումով, թե ինչպես է դիտարկվում փոխաբերությունների կիրառությունը գիտության ոլորտում: Եթե նախկինում փոխաբերությունն ընկալվում էր որպես գեղարվեստական արտահայտչամիջոց, և հետևաբար, տերմինին նույնարժեք կիրառության մասին մտածելն ավելորդ էր, ապա ներկայումս փոխաբերությունը համարվում է մտածողության վերջնարդյունքների, գիտական հասկացությունների և աշխարհի լեզվական պատկերի խոսքայնացմանն ուղղված արդյունավետ և գործածական միջոց (Арутюнова 1999):

Լակոֆը պնդում է, որ փոխաբերությունը հասկացական գործիք է, և հետո միայն լեզվական միջոց, և ըստ այդմ, փոխաբերությունն ինքնին գոյաբանական համադրություն է հասկացական տիրույթների միջև վերհամակցություն աղբյուր տիրույթից դեպի թիրախ տիրույթ (Lakoff 1993:208): Մեկ հասկացությունը կամ միտքը, տվյալ դեպքում, օգտագործվում է՝ ձևայնացնելու և առկայացնելու մեկ այլ գաղափար կամ իրողություն: Բանաձևի տեսքով ներկայացնելու դեպքում կարելի է հղում անել “Ա-ն որպես Բ” դիտարկելու հնարին, որտեղ Ա-ն թիրախ տիրույթն է, իսկ Բ-ն՝ աղբյուր տիրույթը (Schon 1993:148): Այս պարագայում թիրախ տիրույթը փոխհարաբերակցության մեջ է գտնվում աղբյուր-տիրույթի հետ, որի արդյունքում թիրախ տիրույթի տեղեկատվությունը ձևավորվում է աղբյուր-տիրույթի իմաստային հարուստ ներկայանակից:

Բնությունը՝ որպես փոխաբերությունների կազմավորման սկզբնաղբյուր

Բժշկագիտական տարաբնույթ գրականության ուսումնասիրությունից պարզ է դարձել նաև, որ փոխաբերությունները կարող են սերել տարբեր աղբյուր-տիրույթներից, որոնցից առանձնացրել ենք բնությունը՝ որպես փոխաբերությունների կազմավորման սկզբնաղբյուր: Բնության համակարգը հատկապես մեծ դերակատարում ունի մարմնի անատոմիական թերությունները և մարդու օրգանիզմն ախատահարող տարբեր հիվանդությունների հատկանիշները լեզվականացնելու և փոխաբերություններով առկայացնելու համատեքստում: Այս պարագայում որպես սկզբնաղբյուր ծառայում են բուսական օրգանիզմի անատոմիական կենսաբաղադրիչները, բույսի արտաքին և ներքին անատոմիական կառուցվածքը, աճի ու զարգացման առանձնահատկությունները:

Մա բացատրվում է այն օրինաչափությամբ, որ բժշկագիտությունը, հարելով բնական գիտությունների ճյուղին, անքակտելիորեն համակցվում է կենսաբանության բնագավառի հետ՝ հանդիպադրելով մարմնի անատոմիան և կենսաբանական, տվյալ դեպքում՝ բուսական օրգանիզմը: Այդ փոխաբերությունների բաղադրիչային կազմում առկա են բուսականության հետ աղերսներ դրսևորող այնպիսի միավորներ, որոնք, մատնանշում են օրգանիզմի անատոմիական կազմության և զարգացման թերությունները, ինչպես օրինակ՝ *“ash leaf lesion”* (հացենու տերևի բծավորում), *“cloverleaf skull”* (երեքնուկի տերևի նմանվող գանգ), *“fir tree appearance”* (եղևնու պատկեր), *“pruned tree appearance”* (էտած ծառի տեսք), *“daisy flower pattern”* (աստղաձաղիկի պատկեր) և այլն: Նման «կենսատեղաշարժի» արդյունքում մարդու օրգանիզմը նմանեցվում է բնության, բուսականության համակարգի բաղադրիչներին:

Այսպես, փոխաբերությունն ունի ձևավորման սկզբնաղբյուր, հիմք, տվյալ դեպքում՝ բնությունը, և այսպես կոչված՝ նպատակ, որին ծառայում է՝ տվյալ պարագայում խոսքը գնում է մարդու մարմնի մասին, և փոխաբերությունը ծառայում է մարդու օրգանիզմի մասերն անվանելուն:

Օրինակ, *“cerebral cortex”* (բառացի՝ ուղեղային կեղև, գլխուղեղի կեղև) տերմինը, որը կազմվել է բուսական օրգանիզմի բաղադրիչի՝ *“cortex”* հասկացության գործածմամբ, ձևավորվել է ծառի կեղևի արտաքին տեսքի համանմանության արդյունքում: Ուղեղի կեղևն ունի բարդ գծավորում, որն առաջանում է զանգուղեղի մեծ կիսագնդերի վերնածածկույթի վրա դիտվող ակոսների, ինչպես նաև այդ ակոսների միջև գալարուն ճյուղերի դասավորվածության արդյունքում:

Հետևյալ նախադասություններում գլխուղեղի կեղևի գիտականորեն պատշաճ նկարագրությունը նույնպես տրվում է փոխաբերական մի շարք միավորներով, ինչպես օրինակ՝ *“The brain owes its outer appearance of a walnut to the wrinkled and deeply folded cerebral cortex, which handles the innumerable signals responsible for perception and movement and also for mental processes.”*,

“...cerebral cortex, the outermost layer that overlies most of the other brain structures like a fantastically wrinkled tissue wrapped around an orange.”,

“The cortex contains the physical structures responsible for most of what we call ‘brainwork’: cognition, mental imagery, the highly sophisticated processing of visual information, and the ability to produce and understand language.” (Ackerman 1992:13-14):

Տվյալ դեպքում *cortex* բաղադրիչն իմացական դաշտ է ձևավորում անվանվող հասկացության համար: Իմաստային այս տեղաշարժի հիմքում գործում է սերող միջուկի՝ կերպավորման և հատկանշայնության բաղադրիչների համակցությունը:

Բուսական աշխարհի հետ աղերսներ ունեցող փոխաբերությունները, որոնցում մարդու հիվանդությունը արտաքին կամ ներքին որոշ հատկանիշների հիմքով նույնական է բույսի կառուցվածքային առանձնահատկություններին, կարող են լրացված լինել բուսատեսակի որևէ մասի կամ ծառատեսակի անվանումով: Օրինակ, տարբեր ծառերի կամ թփերի տերևների անուններով կարող են որոշարկվել վերմաշկային հատվածում դիտվող պիտանշանները, ինչպես օրինակ՝ *“ash leaf spots”* կամ *“ash-leaf macule”* (բառացի՝ հացենու տերևի բծավորում) անվանվող նշանը, որը հայտնվում է մաշկային արտաքին ծածկույթի վրա տուբերոզ սկլերոզ հիվանդության ժամանակ: Այդ հետքերն ունեն թույլ պիգմենտավորում, հացենու տերևի ձև և բծավորմամբ նմանվում են հացենու տերևի արտաքին նախշին, օրինակ՝

While earlier reports had described the existence of “vitiligo” and “depigmented nevi” in patients with TS, Fitzpatrick et al coined the characteristic name for the hypopigmented macules: ash leaf macules.

(Arbiser 2015:1)

Ash-leaf spots, a diagnostic manifestation of tuberous sclerosis complex, are sometimes difficult to differentiate from other hypopigmented lesions.

(Jindal 2013:1)

Մեկ այլ օրինակ է *“cloverleaf skull syndrome”* կամ *“cloverleaf deformity”* (բառացի՝ երեքնուկի տերևի նմանվող գանգ, երեքնուկի տերևի նմանվող ձևախախտում) տերմինաբանական կապակցությունը, որը հայտնի է նաև *“Kleeblattschädel syndrome”* անվանումով: Խոսքն այստեղ գանգի վաղաժամ ոսկրացման մասին է, ինչի արդյունքում գանգի կամարը նմանվում է երեքնուկի տերևի ուրվագծին: Այս խնդիրը հստակ տեսանելի է լինում ռենտգենանկարի վրա և առաջանում է ներարգանդային շրջանում պտղի գանգի միջոսկրային առաջահետային, պսակաձև և լամբրոպսակ կարանների վաղաժամ սերտաձման դեպքում: Արդյունքում գանգը ձևախախտվում է՝ ընդունելով երեքնուկի տերևի եռմասնյա ձև: Սավաճի օրինակներ են

“Cloverleaf skull syndrome is an abnormal configuration of the calvaria classified as craniosynostosis, consisting of premature ossification of cranial sutures. It is a deformity characterized by a remarkable enlargement of the head, with a trilobed configuration of the frontal view, resembling a threelined clover”, “Cloverleaf skull syndrome is a rare presentation of craniosynostosis with clinical features consisting in trilobed skull, exophthalmos, low ear implantation and upper airway.”

(Fonseca, Borem 2014:189)

“The cloverleaf skull deformity, or Kleeblattschädel, is a rare malformation caused by synostosis of multiple cranial sutures.”

(Resnick, Pollack, Albright 1995)

Ծաղկատեսակների անվանումներով կազմավորված փոխաբերություններից է *“daisy flower pattern”* (աստղաձաղիկի պատկեր) միավորը: Խոսքն այստեղ գեղձուռուցքի ժամանակ տեսանելի թիրոզին բյուրեղների մասին է, որոնց համապատասխանում են ճառագայթվող, աստղաձև և արտաքին ուրվագծով մարգարտաձաղիկի նմանվող թելքային կազմվածքներ (Segen 2011): Այս խմբի փոխաբերություններից է նաև *“lilac ring pattern”* (եղրևանու պատկեր) միավորը, որը կարծրամաշկություն կոչվող հիվանդության ժամանակ մաշկային հյուսվածքի վրա դիտվող, եղրևանու ծաղկաթերթին նմանվող մանուշակագույն կարծրացում է (Segen 2011): *“Dewdrop appearance”* (ցողակաթիլի տեսք) փոխաբերությունը լայն գործածություն է ստացել, օրինակ, մանկաբուժության ոլորտում, երբ խոսքը ջրծաղիկ հիվանդության դեպքում մաշկային ծածկույթի մակերեսին դրսևորվող թարմ բշտիկների մասին է, նկարագրությունը շատ հաճախ տրվում է *“dew drop on rose petal appearance”* «ցողակաթիլ վարդաթերթիկի վրա» փոխաբերությամբ, որում վարդի թերթիկը վերաբերում է կարմրավուն և անկանոն սահմաններով հանգուցիկներին, իսկ դրա վրայի հստակ ուրվագծումով բշտիկը համարվում է ցողակաթիլը (Segen 2011):

Որպես փոխաբերությունների կազմավորման աղբյուր՝ օգտագործվում են նաև ծառատեսակների անունները, ինչպես օրինակ *“fir tree appearance”* (եղևնու պատկեր), *“pruned tree appearance”* (էտած ծառի տեսք), *“pine cone bladder”* (սոճու կոնաձև միզապարկ), *“wintering tree pattern”* (ձմեռային ծառի պատկեր) փոխաբերությունները: *“Fir tree appearance”* միավորը լայն գործածություն ունի մաշկաբանության բնագավառում: Այստեղ տարբերում են թեփաստու որքին կոչվող հիվանդությունը, որն արտահայտվում է վերամաշկային ծածկույթի վրա կարմրավուն, վարդագույն կամ այլ պիգմենտավորմամբ թեփուկանման շերտանստվածքով: Իրանի հետին հատվածում ախտահարված մաշկային հանգուցիկները որպես կանոն լինում են ուղղահայաց տարածվածությամբ և լայնացած առանցքով՝ ողնաշարի ստորին հատվածում, այդ հանգուցիկների թիվն աստիճանաբար կրճատվում է թիակների կամ պարանոցի շրջանում՝ արդյունքում ախտահարված շերտանստվածքին տալով եղևնու սրածայր, կոնաձև ուրվագիծ:

“Pine cone bladder” միավորը նկարագրում է ցիստոգրաֆիայի դեպքում դիտվող պատկեր, որում միզապարկը երկարավուն, անկանոն սահմաններով, կոնանման և գագաթի հատվածում սրածայր ձևվածք ունի՝ հաստացած առանցքով: Թոքերի խցանման ժամանակ կատարվում է անգիոգրաֆիա և թոքերի արտերիոգրամի (զարկերակների ռենտգենանկար) վրա տեսանելի է լինում, որ խցանված և լայնացած թոքային զարկերակիկները կտրուկ կտրվածքներով են, որոնք հիշեցնում են ծառի էտված տեսքը: Կլինիկական այս պատկերը մատնանշելու նպատակով օգտագործվում է *“pruned tree appearance”* փոխաբերությունը: Մեկ այլ *“wintering tree pattern”* փոխաբերությունը կիրառվում է թոքերի փքախտի նկարագրության դեպքում: Այս հիվանդության ժամանակ թոքերի անգիոգրամի վրա տեսանելի են լինում անոթները, որոնք ունենում են ձմռանը ծառի ճյուղերին նմանվող չորացած և դալկացած կմախքանման տեսք:

Բուսականության սկզբնաղբյուր դաշտից փոխաբերական նմանօրինակ տեղաշարժի արդյունքում օրգան-համակարգերի թերությունները կամ հիվանդությունները ներկայացվում են որպես բնության մասերի, բնաստեղծ համակարգի ճանաչողական միավոր:

Եզրակացություն

Վերոնշյալ փոխաբերությունների ցանկը չի կարող համարվել սպառիչ, քանի որ բնությունն իր բաղադրատարրերով հանդերձ՝ հանդես է գալիս իբրև մարդու կենսագործունեության անքակտելի մաս, և այս տեսանկյունից կարող են ստեղծվել նոր բառամիավորներ՝ մատնանշելու մարդու օրգանիզմում դրսևորվող տարբեր հիվանդություններ կամ ախտանիշներ: Փոխաբերությունը, այս առումով, մեկնաբանում է բարդ բժշկագիտական տեղեկատվությունը՝ այդպիսով մատչելի դարձնելով դրա իմաստաբովանդակային պլանը և ապահովելով հաղորդագրության դյուրըմբռնելիությունը հասցեատիրոջ համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան, Է.Բ. (1971) *Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին*, ԼՀԳ, թիվ 1, էջ 85-96:
2. Ղազանյան, Լ.Հ. (1977) *Հայերեն լեզվաբանական տերմինների համակարգային-կառուցվածքային վերլուծություն*. // Լեզվի և ոճի հարցեր, հ.4, Երևան, 220 էջ:
3. Ackerman, S. (1992) *Discovering the Brain*. 2. Major Structures and Functions of the Brain. Washington (DC): National Academies Press (US). Available at: <<https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK234157/>> [Accessed May 2017].
4. Arbisser, J.L. (2015) *Efficacy of Rapamycin in Tuberous Sclerosis-Associated Hypopigmented Macules: Back to the Future*. JAMA Dermatology, 151(7), 703–704. Available at: <<http://doi.org/10.1001/jamadermatol.2014.4299>> [Accessed May 2017].
5. Brunt, R. (1998) *Medical Eponyms Revisited*. English Today 14(2), pp. 51-56, Parthenon Pub. Group.
6. Budrys, V. (2005) *Neurological Eponyms Derived from Literature and Visual Art*. PubMed - NCBI. Available at: <<https://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/15942244>> [Accessed January 2014].
7. Ferguson, R.P. and Thomas, D. (2014) *Medical Eponyms*. Journal of Community Hospital Internal Medicine Perspectives, 4(3), 10.3402/jchimp.v4.25046. Available at: <<http://doi.org/10.3402/jchimp.v4.25046>> [Accessed October 2017].
8. Fonseca, J.M. and Borem, L.M. (2014) *Cloverleaf Skull Syndrome: case report*. Radiologia Brasileira, 47(3), 189–190. Available at: <<http://doi.org/10.1590/01003984.2013.1681>> [Accessed May 2017].
9. *Harvard Health Publications*, Harvard Medical School. Available at: <<http://www.health.harvard.edu/>> [Accessed October 2016].
10. Jindal, R., Jain, A., Gupta, A. and Shirazi, N. (2013) *Ash-leaf Spots or Naevus Depigmentosus: a diagnostic challenge*. BMJ Case Reports. Available at <<http://doi.org/10.1136/bcr-2012-007008>> [Accessed May 2017].
11. Lakoff, G. (1993) *The Contemporary Theory of Metaphor*. Metaphor and Thought. / Ed. by A. Ortony, 2nd edition, pp. 202-251. Cambridge: CUP.
12. Resnick D.K.; Pollack I.F.; Albright A.L. (1995) *Surgical Management of the Cloverleaf Skull Deformity*. Available at: <<https://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/7888390>> [Accessed December 2016].
13. Roche, C.J.; O’Keeffe, D.P.; Lee, W.K.; Duddalwar, V.A.; Torreggiani, W.C.; Curtis, J.M. (2002) *Selections from the Buffet of Food Signs in Radiology*. RadioGraphics, 22(6), 1369–1384. doi:10.1148/rg.226025521. Available at: <<https://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/12432108>> [Accessed December 2014].
14. Rodin, A. and Jack, D.K. (1989) *Medicine, Literature and Eponyms*. / Ed. by R.E. Krieger, Malabar.
15. Sager, J. (1990) *Practical Course in Terminology Processing*. John Benjamins Publishing.
16. Schon, D.A. (1963) *Displacement of Concepts*. Tavistock, London.

17. Segen, J.C. (1992) *The Dictionary of Modern Medicine*. Carnforth, Lancs, UK: Parthenon Pub. Group.
18. Segen, J.C. (2011) *The Illustrated Doctors Dictionary: a medical dictionary written by a doctor for doctors now illustrated*. Cork: BookBaby.
19. *Stedman's Online Medical Dictionary*. Available at: <<http://stedmansonline.com/>> [Accessed December 2015].
20. Арутюнова, Н.Д. (1999) *Язык и мир человека* / Н.Д. Арутюнова. -2-е изд. испр. М.:Язык и рус. культуры, 896 с.
21. Будаев, Э.В. (2007) *Становление когнитивной теории метафоры*. Екатеринбург, Вып. 1, с. 16-32.
22. Лейчик, В.М. (1973) *Термины – синонимы, дублеты, эквиваленты, варианты // Актуальные проблемы лексикологии и словообразования*. Новосибирск: НГУ, с.103-107.
23. Мотченко, И.В. (2001) *Основные тенденции в формировании английской медицинской терминологии*. автореферат, дис. канд. филол. наук, 215 с. Available at: <<http://www.dissercat.com/content/meditsinskieterminosistemy#ixzz53A1iZEop>> [Accessed May 2014].

Природа как сфера-источник формирования медико-клинических метафор

В данной статье проанализированы медицинские метафоры сформированные из сферы-источника “природа”. В области медицины такие метафоры рассматриваются в качестве эффективного средства для описания и выражения различных клинических симптомов и патологий. В статье выделены медицинские реалии “которые актуализируются метафорами “основанными на именах элементов из сферы-источника –”природа”.

Modelling Clinical Metaphors through References to Nature

The realm of medicine values the employment of linguistic means that foster and facilitate understanding of diagnostic and clinical information. Metaphor is considered to be one of these means and can specifically be modelled through the interaction of human cognition and natural environment. The current article is an attempt to distinguish clinical signs, pathologies and symptoms, which are verbalized by means of nature-related metaphors.

Մեր հեղինակները

Ալինա Պետրոսյան – ԵՊԲՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ alina.petrosyan@yahoo.com

Անահիտ Հակոբյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝
anahit.hakobyan1988@yandex.ru

Անի Տեր-Պետրոսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ aniterpetrosyan@ysu.am

Աննա Կնյազյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ annaknyazyan@ysu.am

Աստղիկ Մխիթարյան – Վաղարշապատի Մ.Գորկու անվան հ.5 ավագ դպրոցի ուսուցչուհի
Էլ. հասցե՝ asto7@rambler.ru

Արեգա Համբարձումյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ orbisenglish@gmail.com

Արմենուհի Մարտիրոսյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի ասիստենտ
Էլ. հասցե՝ arm.martirosyan@ysu.am

Գայանե Մուրադյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.դ.
Էլ. հասցե՝ g.murad@ysu.am

Գոհար Հարությունյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ goharharutyunyan@ysu.am

Համլետ Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ hamlet.araqelyan@gmail.com

Հասմիկ Ղաջոյան – ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikghajoyan@mail.ru

Հասմիկ Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ hasmikmkrтчyan@ysu.am

Մարիամ Առաքելյան – ՀՊՄՀ օտար լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ mariamarakelyan89@mail.ru

Մարիամ Գևորգյան – ԵՊԼՀ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ miriamgevorgian@gmail.com

Մարիանա Սարգսյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marianasargsyan@ysu.am

Մարիկա Տոնյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ marikatonyan@ysu.am

Մարինե Մկրտչյան – ԵՊՀ դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ m.mkrтчyan@ysu.am

Նաիրա Մկրտչյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ nairamkryan@ysu.am

Նատալյա Գոնչար-Խանջյան – ԵՊՀ արտասահմանյան գրականության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ.
Էլ. հասցե՝ natalie.goncharkhanjyan@ysu.am

Նարե Հակոբյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ narekaytser@gmail.com

Նարե Մկրտչյան – Հայ-Ռուսական (Մլավոնական) համալսարանի արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ mkrtchyan.nare@gmail.com

Նարե Չոբանյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի ասպիրանտ
Էլ. հասցե՝ nare.chobanyan@gmail.com

Նարե Ջաբաղյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ narejabaghyan@ysu.am

Ջեմմա Միլիտոնյան – ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անգլերեն լեզվի և գականության ամբիոնի դասախոս
Էլ. հասցե՝ jemmamilitonyan@yandex.com

Ռուզաննա Առաքելյան – ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ ruzanna.arakelyan@ysu.am

Միրարփի Կարապետյան – ԵՊՀ թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դասախոս, Բ.գ.թ.
Էլ. հասցե՝ sirarpikarapetyan@ysu.am

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

«Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում» գիտական հանդեսը լույս է տեսնում տարին մեկ անգամ: Հանդեսում տպագրվելու համար կարող են ներկայացվել հոդվածներ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով **Sylfaen** տառատեսակով, լուսանցքները՝ 2 սմ, վերնագիրը՝ 14 տառաչափով (աջ կողմում, գլխատառերով, թավատառ), հիմնական տեքստը և ենթավերնագրերը (ձախ կողմում, թավատառ), հեղինակի անուն, ազգանունը (աջ կողմում, թավատառ), աշխատավայրը (աջ կողմում, շեղատառ)՝ 12 տառաչափով, բոլոր տողերի միջև տարածությունը՝ 1.5: Հոդվածին անհրաժեշտ է կցել հայերեն, անգլերեն և ռուսերեն ամփոփագրեր՝ 60-80 բառի սահմաններում, 7-10 բանալի բառեր (հիմնական տեքստի լեզվով), հեղինակի մասին համառոտ տեղեկություն՝ աշխատավայր, կոչում, պաշտոն, էլ. հասցե, հեռախոսահամար (հայերեն):

- Տեքստը բաժանել հետևյալ մասերի՝ ներածություն, ենթաբաժիններ և եզրակացություն:
- Այլ հեղինակների մեջբերումները՝ չակերտների մեջ, որպես տեքստի շարունակություն /եթե կարճ է/ կամ նոր տողից /եթե երկար է/:
- Այլ հեղինակների աշխատությունների վերնագրերը՝ չակերտների մեջ:
- Փաստացի օրինակները՝ շեղատառ, առանց չակերտների: Եթե օրինակները ներկայանում են մեկից ավելի նախադասություններով, առանձնացնել տեքստից՝ վերևում և ներքևում թողնելով մեկական տարածություն: Օրինակի մեջ ուշադրության արժանի բառերը կամ բառախմբերը ներկայացնել թավատառ:
- Տեքստում աղբյուրը ներկայացնել հետևյալ ձևով՝ փակագծերում տալ հեղինակի ազգանունը և հրատարակչության տարեթիվը: Եթե մատնանշվում է էջը՝ տարեթվից հետո դնել հայկական վերջակետ, նշել էջը: Օրինակ՝ (Svartvik 2005) կամ (Bronfen 1992:330):
- Ծանոթագրությունները՝ հոդվածի վերջում, գրականության ցանկից առաջ:
- Գրականության ցանկը ներկայացնել **այբբենական կարգով**՝ խստիվ հետևելով ներքոնշյալ կանոններին՝
հեղինակի ազգանունը, անվանատառերը, (հրատարակման թվականը), աշխատանքի վերնագիրը (շեղատառերով, առանց չակերտների), հրատարակման վայրը, հրատարակչությունը, հայկական վերջակետ:

Օրինակներ՝

- 1.Ջահուկյան, Գ.Բ. (2003) *Շարահյուսական ուսումնասիրություններ*. Երևան: Ստոդիկ հրատարակչություն:
- 2.Eisenstein, E.L. (1979) *The Printing Press as an Agent of Change*. Cambridge: CUP.
- 3.Myer, T. (1997) *The Language of Science*. Available at: <<http://www.sfsite.com>> [Accessed June 2012]
- 4.Redbury, M. (2003) *Language and Discourse*. // Investigations in Linguistics. / Ed. by R.K. Smith. New York: Redgate Inc.
- 5.Svartvik, J. (2005) *A Life in Linguistics*. // The European English Messenger. / Ed. by J.A. Stotesbury. Vol.14 (1). Portugal: Grafica de Coimbra.
- 6.(1998) *Oxford Advanced Learner's Dictionary of Current English*. Oxford: OUP.

- Հոդվածի էլեկտրոնային տարբերակը ուղարկել afajournal@ysu.am էլ. հասցեին:

Հասցե՝ ՀՀ, Երևան-0025, Ալեք Մանուկյան 1,
Երևանի պետական համալսարան
Հեռախոս՝ (+374 60) 710 546
Էլ. հասցե՝ sedagasparyan@ysu.am, afajournal@ysu.am

«ԳԵՎՈՐԳ - ԳՐԱՅՐ» ՍՊԸ



Հրատարակչություն
Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:
Հեռ.՝ (011) - 52.79.74, 055-52.79.74
Էլ. փոստ lusakn@rambler.ru